ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0023, ք. Երևան, Արշակունյաց 7,
☎ + (37410) 523 122
ֆաքս + (37410) 587 586

05.03.14թ № 21/1.2/1203-14

Ձեր_____ առ _____

Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի նախագահ պարոն Արա Զոհրաբյանին
(ք.Երևան, Զաքիյան 3)

Ի պատասխան ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե հասցեագրված Ձեր 18.02.2014թ. №Ն/165 գրության՝ փաստաբաններին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ, հայտնվում է որ հետևյալը:

Ուսումնասիրությունից պարզվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դրույթի կիրառման ժամանակ տեղեկատվություն տրամադրող ստորաբաժանման կամ մասնագետների կողմից տարաբնույթ ընկալմամբ է ընդունվում այդ դրույթում գրառված «իրավաբանական օգնություն ցույց տալու համար» բառերը և որոշ դեպքերում փաստաբաններին տեղեկատվություն տրամադրելու համար պահանջվում են իրավաբանական օգնություն ցույց տալու փաստը հաստատող փաստաթուղթ: Հաշվի առնելով այն, որ փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և օրենքներով, փաստաբանական պալատի կանոնադրությամբ և փաստաբանական վարքագծի կանոնագրքով և այն, որ փաստաբանը Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դրույթի կիրառմամբ ստացված տեղեկատվությունը ըստ էության

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՄՈՒՏՔԻ № 84
07 03 20 14թ.

կարող է օգտագործել միայն իրավաբանական օգնություն ցույց տալու համար, ուստի Կոմիտեի կողմից հանձնարարվել է փաստաբաններին տեղեկատվություն տրամադրելիս փաստաբանական գործունեություն իրականացնելու համար համապատասխան արտոնագրի պատճենի ներկայացնելը դիտել որպես իրավաբանական օգնություն ցույց տալու փաստը հաստատող հանգամանք:

Ա. Անանյան

Գույքի գրանցման վարչություն
Կատ.՝ Հ.Մարտիրոսյան 58-76-15
Խ.Գասպարյան 58-53-19